

ներին, ինչպես նաև ներքին տնտեսական արդյունավետ քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Ընդհանուր առմամբ, մարդկային զարգացման հեռանկարների կանխատեսումները կարող են հիմնվել երեք հնարավոր տնտեսական հիպոթեզների վրա՝ *համագործակցություն, հակամարտություն և մեկուսացում*: Հաշվի առնելով ազգային մրցակցային առավելությունների օգտագործման ակնհայտ անհրաժեշտությունը համագործակցության մեջ ներգրավված բոլոր կողմերի համար, մեր կողմից հակամարտության և մեկուսացման հնարավորությունները ենթադրվում են միայն քաղաքական ենթատեքստով՝ չբացառելով դրանց կարճաժամկետ տարբերակները ոչ գլոբալ, այլ ընդամենը տարածաշրջանային հարթության վրա: Ըստ որում, ակնկալվում է համաշխարհային տնտեսության ուժի կենտրոնների ազդեցության ոլորտների հետագա ընդարձակում՝ նոր երկրների՝ այդ ուղեծրերի մեջ ներգրավվելու մեծ հավանականությամբ:

ՍՄԲԱՏ ԱՂԱՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

«ԳԼՈԲԱԼԻՑՄԱՆ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

«Գլոբալացում»¹ բարձրահինչյուն բառը ներըմբռնողաբար, թվում է, հասկանալի է, սակայն գլոբալացման շուրջ, ինչպես ժամանակակից բացառիկություն, անընդմեջ ծագող բանավեճերում հանդիպում ենք դժվարությունների, որոնցից շատերը, մեր կարծիքով, կապված են նրա հասկացության չմշակված սահմանման մեջ:

Պատմական ժամանակահատվածի որոշ փուլերում գլոբալի մասին պատկերացումը, ինչպես մարդկության գիտելիքների ամբողջականության և աշխարհի սահմանագծի մասին, փոխվում է՝ կախված նրա զարգացման փուլից: Իր հասկացության առավելագույն սահմաններին այն հասավ միայն մեծ աշխարհագրական հայտնագործություններից հետո, երբ երկիրը մարդկության գիտակցության և գործունեության մեջ դարձավ փակված (կլոր): Ուստի, գլոբալը կարելի է ներկայացնել ինչպես ամբողջականության սահման, և տրամաբանական կլինի առաջարկել, որ գլոբալից անցումը գլոբալացման հենց սահմանային նպատակին հասնելու գործընթաց է, այսինքն՝ սահմանային ձև է ամբողջի (ամբողջականացման):

Հարկ է նշել, որ գլոբալացումը ավելին է, քան գլոբալ տնտեսության ձևավորումը, որ այն պատմական գործընթացի նպատակ է, որ ընդգրկում է բազում ինտեգրացիոն գործընթացներ, ինչպես միտումներ, որոնք որոշում են տվյալ գործընթացի դինամիկան և ինտեգրացիոնալացումը, որը գլոբալացման արդի փուլն է: Այստեղ կարևոր է հասկանալ, որ գլոբալացման գործընթացը համաժինին հասնելու ճանապարհը չէ, այլ հանդիսանում է բազմաձևության կարևորագույն աղբյուր, այսինքն՝ բազում ձևերի միավորում է ամբողջի մեջ, որն էլ ներկայանում է ինչպես արդյունք:

Բազմաձևությունից ելնելով հարկ է նշել, որ գլոբալացմանը հետևող աշխարհը ներկայանում է ինչպես միմյանց փոխկապված ինքնօրինակ մասնիկների ամբողջություն – սուբյեկտներ: Սուբյեկտների միջև եղած կապերը տարբեր են՝ կախված իրենց զարգացման փուլերից և նպա-

¹ «Գլոբալացում» շարադրանքի հիմքում տ.գ.դ., պրոֆ. Է.Արզոյանցի գիտական հայացքներն են:

տակային գործունեությունից և կործանարար չեն, այլ լրացնում են միմյանց ինքնօրինակությունը: Առաջնորդը գործընկեր է, ներմուծվում է միայն այն, ինչ ինքնօրինականության կողմից ընկալվում է անհրաժեշտ և պատշաճ:

Այսպիսով, գլոբալացումը, ներկայանալով ինչպես սոցիալական համակարգի զարգացում, ուղղված է հասնելու նրա սահմանային ամբողջականությանը, որի առաջացման և զարգացման առիթ հանդիսացան տնտեսական ինտեգրման երեք կարևոր գործոններ: Առաջինը՝ տեխնոլոգիաների փոփոխությունը, որոնք հնարավորություն ստեղծեցին արտադրության ինտերնացիոնալացմանը: Երկրորդը առևտրում դժվարությունների աստիճանաբար հաղթահարումն էր և այն խոչընդոտների վերացումը, որոնք առաջանում էին առևտրի կանոնների կարգավորման ընթացքում: Երրորդը գործարար ակտիվության ինտերնացիոնալացումն է, այսինքն՝ ազգային ընկերությունների արտադրական գործունեության ծավալումը ազգային սահմաններից դուրս և կոոպերացիոն կապերով փոխմիահյուսված՝ բարդ ցանցի ստեղծումը: Այս երեք գործընթացները դարձրին պետությունները տնտեսապես փոխկախված և առիթ հանդիսացան տնտեսական աճի նոր հնարավորությունների ստեղծման համար:

1. Տեխնոլոգիական փոփոխություններ: Ոչ վաղ անցյալի հայտնագործությունները՝ համակարգիչները, տեղեկատվական-կոմունիկացիոն տեխնոլոգիաները և նոր տեսակի փոխադրամիջոցները, ավելի կրճատեցին ժամանակի և տարածության գործոնը՝ ազդելով մարդկանց ընդունակությունների և ձեռնարկությունների համատեղ գործունեության վրա, որն ամբողջ աշխարհում առևտրի կազմակերպման և արտադրության հնարավորությունների պատճենահանման առիթ հանդիսացավ: Սակայն ավելի արմատական փոփոխություններ տեղի ունեցան տեղեկատվական տեխնոլոգիաների և տելեկոմունիկացիոն համակարգերի մեջ: Երբ տեխնոլոգիական գործընթացները ընդլայնում էին ամենքի սահմանները, ինչը կարելի է արտադրել, և աշխարհագրական տարածքները, որտեղ այն կարելի է արտադրել, փոխադրամիջոցների տեխնոլոգիական առաջընթացը ընդլայնեց շրջանակները այն ամենի, ինչը կղաճար առևտրի առարկա, և կրճատեց այն հեռավորությունը, որը բաժանում էր ժողովուրդներին: Էլեկտրոնային առևտրի զարգացման վերջին ուղղություններից մեկը՝ ինտերնետը, փաստում է անսահման գլոբալ տնտեսության առաջացման մասին: Էլեկտրոնային առևտուրը, փաստորեն անցնելով իր զարգացման ճանապարհի առաջին քայլերը, այժմ պարտադրում է վերանայել իր նկատմամբ արդեն ձևավորված ավանդական հասկացությունները և միջազգային առևտրի ոլորտում իր ունեցած դիրքերը՝ առաջարկելով էլեկտրոնային առևտրի նոր ձևեր B2B (Business-to-Business), որտեղ համակարգը ենթադրում է, որ առևտրային հարաբերությունների երկու կողմերում էլ ձեռնարկություններ են և B2C (Business-to-Customer), իսկ այս համակարգը ենթադրում է, որ առևտրային հարաբերությունների մի կողմում ձեռնարկությունն է, իսկ մյուս կողմում՝ անհատ սպառողները կամ տնային տնտեսությունները:

2. Առևտրում խոչընդոտների կրճատումը հնարավորություն ընձեռեց համաշխարհային տնտեսության շրջանակներում նոր տեխնոլոգիաների կիրառմանը: Շատ երկրների համար համաշխարհային շուկան տնտեսական աճի և զարգացման կարևոր պայման էր: Միջազգային առևտրի ազատականացումը և կապիտալ ներդրումային ընթացակարգերը պատճառ հանդիսացան նոր միջազգային նորմերի ստեղծման, իսկ ավելի ուշ մի ամբողջ իրավական համակարգի ստեղծման: Միջազգային առևտրի իրավական հիմքերի 50 տարվա զարգացումը, սկզբում ՏԱԳՀ-ի շրջանակներում, իսկ այժմ ԱՀԿ-ն համակարգում հանգեցրեց սահմանային առևտրի խոչընդոտների զգալիորեն կրճատման: Այսինքն՝ տվյալ ժամանակահատվածում զգալիորեն կրճատվեց առևտրում կիրառվող մաքսային և ոչ տարիֆային սահմանափակումների կիրառման քանակը: Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ստեղծումը միջազգային տնտեսական հարաբերություններում նոր իրավական համակարգի գործունեության հիմք հանդիսացավ, որը կարգավորում է ապրանքների և ծառայությունների միջազգային փոխա-

նակումը: ԱՀԿ-ի ստեղծումը միջազգային առևտրի արագ զարգացման և արտադրության հետագա զլորալացման հիմքն է:

3. Ակտիվ գործարար շրջանի ինտերնացիոնալացումը: Առևտրի խոչընդոտների կրճատումը, և տեղեկատվական տեխնոլոգիաների փոփոխությունը և, իհարկե, բեռների տեղափոխման առաջընթացը բազմաթիվ ընկերությունների՝ իրենց ձեռնարկությունները աշխարհի տարբեր երկրներ տեղափոխելու բազում հնարավորություններ ստեղծեցին:

Տնտեսության զլորալացումը հանգեցրեց առանձին երկրների շուկաների շարունակական սերտաճման: Բավականին ինտենսիվ և տեսանելի է այդ գործընթացը տարբեր տեսակի ինտերնացիոնալ խմբավորումների շրջանակներում, որոնք ապրանքի շարժի ճանապարհին փոքրացնում կամ ընդհանրապես վերացնում են խոչընդոտները երկրների միջև:

Վերջապես բաց տնտեսությունը հնարավորություն է տալիս ստանալու կրկնակի նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսներ և ընդգրկվելու արտադրության միջազգային պատճենահանման գործընթացում: Բաց տնտեսությունը չի հրաժարվում պետության կարգավորման դերից: Այն պետք է կառուցված լինի արդյունավետության, մրցակցության և ազգային անվտանգության հիման վրա՝ հաշվի առնելով արտահանումը և ներմուծումը, կապիտալի շարժը, արժույթը, հարկերը, երկրի վարկային և ներդրումային քաղաքականությունը, որոնք ազդում են արտաքին աշխարհի հետ երկրի փոխազդեցության ձևի և մասշտաբների վրա: Բաց տնտեսության անցնելու միտումը, որը զարգացնում է ինտերնացիոնալացման գործընթացը, չի ժխտում առանձին երկրների հակասական դիրքերը ազատ առևտրի հանդեպ և նրանց ձգտումը արտաքին շուկաներում պահպանելու ազատ մրցակցային սկզբունքներով ձեռք բերված իրենց համեմատական առավելությունները և խթանելու իրենց տնտեսական շահերին նպաստող սահմանների ընդլայնումը:

Գլոբալացման մեկ այլ հասկացությունը գլոբալ գերիշխանության բնական ուսմունքն է: Գերակշռող միտումը կամ գերակշռող մոդելը միշտ ձգտում է տիրանալու գործընթացի տարածությանը՝ պարտադրելով նրան միայն իր խաղի կանոնները: Բայց որոշակի փուլում համակարգի նման զավթողականությունը, որի հետևանքով առաջանում է համաձիճը, կարող է փլուզվել:

Գաղափարական բոլոր տեսակի կոնֆլիկտների վերացման վերաբերյալ առաջացած պատրանքները, որի հիմքն է գլոբալացումը, արևմտյան երկրների համար դարձան հարմար ընդհանրացնող և աշխարհում գրավիչ ձևով ընթացող պայմաններ: Արտացոլելով նոր իրականությունը, այսինքն՝ գլոբալ փոխկախվածության վերածնունդը, որոնք հիմնականում ուղղորդվում են նոր կապի տեխնոլոգիաներով, որտեղ ազգային սահմանները քարտեզի վրա դառնում են սահմանաբաժան գիծ և դադարում են իրական խոչընդոտ լինել ազատ առևտրի և կապիտալի շարժի համար:

Աշխարհի հզոր պետությունների քաղաքական և տնտեսական էլիտայից շատերի համար, գլոբալացումը ոչ միայն ուշադրության արժանի իրականություն է, այլ նաև հստակ սահմանված կարգ՝ որոշելով ոչ միայն սահմանված կարգի էությունը, այլ նաև նրա մեկնաբանության մեխանիզմը, և ոչ միայն որպես ախտորոշման գործիք, այլ հստակ մշակված գործողությունների ծրագիր: Գլոբալացման նման տեսակետների համակարգված ձևը կազմում է ուսմունք, որը հիմնվում է բարոյապես ամուր համոզմունքի վրա, այն է՝ գլոբալացումը պատմականորեն անխուսափելի է:

Իրականում, նոր գերիշխանության դերից բացի, գլոբալացման ուսմունքը արդյունավետ կոորդինատային հսմակարգ է՝ որոշելու ժամանակակից աշխարհը և այդ աշխարհի հետ ունեցած փոխհարաբերությունը:

Այն հրապուրում է իր ինտելեկտուալ աննախադեպությամբ, տալիս է այնպիսի բարդ իրադարձությունների հասկանալի բացատրություններ, ինչպիսին են հետարդյունաբերական և

հետազգայնական ժամանակաշրջանները, համաշխարհային տնտեսության ազատ հասանելիությունը բնական և նոր տեխնոլոգիաների անխուսափելի հետևանք է, իսկ Համաշխարհային առևտրի կազմակերպությունը (ՀԱԿ), Համաշխարհային բանկը (ՀԲ) և Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) ծառայում են նրա ինստիտուցիոնալ իրողությանը գլոբալ մասշտաբով: Ազատ շուկան պետք է լինի գլոբալ իր մասշտաբներով, որտեղ մրցում են համարձակները և աշխատասերները: Երկրների առաջխաղացումը պետք է գնահատել ոչ թե նրանց ներքին ժողովրդավարացման աստիճանով, այլ թե որքանով են նրանք գլոբալացված:

Հայաստանը, լինելով գլոբալ տնտեսության թեպետ փոքր, սակայն մի մաս, անկասկած մասնակից է գլոբալ տնտեսության ձևավորման գործընթացին: Լինելով սուղ բնական ռեսուրսներով ցամաքային երկիր՝ Հայաստանին անհրաժեշտ է կատարելագործել արտաքին տնտեսական կապերը համաշխարհային տնտեսական, առևտրական և ֆինանսական համակարգերի հետ, որը կմեծացնի ինչպես Հանրապետության ազդեցությունը գլոբալ տնտեսություն ձևավորելու գործընթացում, այնպես էլ վերջիններիս ազդեցությունը Հանրապետության տնտեսության վրա:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հանրապետությունը հայտնվել էր տնտեսությունը արմատապես վերակառուցվելու խնդրի առաջ, որի արագ լուծումը և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրվելու միակ ճանապարհը արտաքին տնտեսական կապերի ձևավորումն էր, արտասահմանյան երկրների հետ համատեղ ձեռնարկությունների, առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև գիտության բնագավառում մման համագործակցության ստեղծումը:

Հայաստանի մման փոքր և որոշակի տնտեսական շրջափակման պայմաններում հայտնված տնտեսության համար տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը դառնում է տնտեսական զարգացման կարևորագույն այլընտրանքային ուղղություններից մեկը: Այս տեսակետին է նաև կառավարությունը, որը 2000թ. SS ոլորտը հռչակեց տնտեսության զարգացման գերակա ուղղություն¹: Մինչ այդ 1998թ. ստեղծվեց տեղեկատվական տեխնոլոգիայի հիմնադրամը, որի առաքելությունն է օժանդակել տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներթափանցմանը այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ տնտեսությունը, մշակույթը, գիտությունը և կրթությունը:

Իր հիմնադրման պահից ի վեր SSՀ-ը, համագործակցելով պետական մարմինների, մասնավոր հատվածի, տարբեր ոլորտների ներկայացուցիչների տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև տեղական և միջազգային դոնորների հետ, իրականացրել է բազմաթիվ և բազմապիսի նախագծեր, կրթական ուսուցողական դասընթացներ, սեմինարներ և համաժողովներ՝ նպատակ ունենալով, մասնավորապես, հասարակայնությանն ավելի իրազեկ դարձնել SS ոլորտին:

Համագործակցելով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) հետ՝ SSՀ-ը 1998թ. իրականացրել է «Freenet ինտերնետային ուսուցողական կենտրոն» նախագիծը, կազմակերպել է «Ինտերնետ և հասարակությունը. Էլ.զարգացումը, թե թվանշային ճեղքվածք» միջազգային կոնֆերանսը (2000թ.), հաղթել է «World Bank infoDev Country Gateway» դրամաշնորհը՝ ուղղված Հայաստանի Gateway պորտալի նախագծման (www.gateway.am) և «Էլ.Հայաստան» հիմնադրամի ստեղծմանը (2001թ.): Հայոց գրերի գյուտի 1600-ամյակի առիթով 2005թ. SSՀ-ը կազմակերպել է «Մաշտոց 1600» խորագրով էլեկտրոնային բովանդակությամբ առաջին համահայկական մրցույթը, որում անվանակարգային հաղթողները մասնակցել են ՏՀՀԳ թունիսյան փուլին (WSA), որտեղից վերադարձել են 2 համաշխարհային մրցանակներով: Օգտագործելով Թունիսում ձեռք բերած այդ հաջողությունները՝ 2006թ. հոկտեմբերին Երևանում անցկացվել է համաշխարհային գագաթաժողով: Մինչ այդ SSՀ-ը կազմակերպել է նաև երկրորդ համահայ-

¹ am ամսագիր, Տեղեկատվական տեխնոլոգիաները Հայաստանում գերակա ճյուղ, հոկտեմբեր 2002, №2 էջ 3:

կական մրցույթը, որի անվանակարգային հաղթողները մասնակցել են 2007թ. Խորվաթիայում կայացած համաշխարհային գազաթափողովի մրցանակաբաշխությանը:

Վերը շարադրվածում ցանկություն կա ներկայացնելու մարդկային կապիտալի, գիտելիքի վրա հիմնված տնտեսության, համաշխարհային շուկայի կողմից ժամանակակից կոմունիկացիոն պահանջներով պարտադրված պայմանների կարևորությունը: Տնտեսության արդյունավետությունն ապահովելու առաջնային խնդիրներից մեկը ՀՀ պայմաններում մարդկային ռեսուրսների առկայությունն է, որում հետևողական քաղաքականության իրագործման դեպքում նորագույն տեխնոլոգիաների յուրացումը թույլ կտա լուծել կառուցվածքային վերափոխումների, արտադրության տեխնիկատեխնոլոգիական գործընթացների նորացման և բազմաթիվ սոցիալական խնդիրներ:

Հանրապետությունում մարդկային ռեսուրսին մնան կարևորություն տալը բացատրվում է մտավոր ազգ լինելու հանգամանքով, մեր ազգը միշտ էլ աչքի է ընկել իր հայտնագործությունների յուրօրինակ մտահղացումներով ու տեխնիկական լուծումներով: Եթե մենք ընտրովի հույս ենք դնում ՏՏ ոլորտի վրա, որտեղ կարողանալու ենք մրցակցային առավելություններ ապահովել, ապա պետք է գնահատենք, թե ինչպիսին է Հանրապետության մարդկային ռեսուրսը (որակական առումով), և ինչպիսին է նրա արժեքը: Հնարավոր է մաս, որ այն այնքան էլ պահանջված չէ, որքան ասենք Հնդկաստանում կամ Չինաստանում, բայց համաշխարհային շուկայում, հուսով ենք, Հանրապետության մրցակցային դիրքերը կկարողանանք ապահովել:

Հանրապետությունը, սկսած 1991 թվականից լուրջ քայլեր ձեռնարկեց շուկայական արմատական բարեփոխումների իրականացման և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրվելու նախադրյալներ ստեղծելու ուղղությամբ, որում միջազգային տնտեսական հարաբերությունները դարձան Հանրապետության զարգացման կարևորագույն գործոններից մեկը, որի հիմնական նպատակն է արտահանման ծավալների աճի կայուն և բարձր տեմպերի ապահովումը:

Հայաստանը, 1991թ.-ից լինելով ԱՊՀ անդամ, իր վրա պարտավորություն է ստանձնել համաշխարհային քաղաքական և տնտեսական հարաբերություններում մասնակցել նոր տարածաշրջանային միավորման ստեղծմանը, որի շարժիչ ուժը կայուն և ճկուն ընդհանուր շուկայի ստեղծումն է, բարձրացնելով ԱՊՀ անդամ երկրների կողմից արտադրվող ապրանքների մրցունակությունը արտաքին շուկաներում:

Անցնելով ԱՀԿ¹ անդամակցության երկարատև բանակցային գործընթաց, որն ուղեկցվում էր կառուցվածքային խնդիրների և անցումային տնտեսությանը բնորոշ բարդություններով, ՀՀ-ն 2003թ. փետրվարի 5-ին դարձավ ԱՀԿ լիիրավ անդամ՝ համարվելով շուկայական սկզբունքներով առևտուր իրականացնող երկիր, որը նպաստեց Հանրապետությունում ազատ առևտրական և տնտեսական քաղաքականության ձևավորմանն ու ամրապնդմանը:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում ստեղծվել են գրեթե բոլոր անհրաժեշտ պայմանները՝ արտաքին առևտրատնտեսական գործարքների զարգացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու համար: Սակայն, որպեսզի կարողանանք ամբողջական պատկերացում կազմել, թե ՀՀ տնտեսության վրա ինչպիսի ազդեցություն է այն ունեցել, անհրաժեշտ է ուսումնասիրել արտաքին առևտուրը և տնտեսական աճը:

¹ ԱՀԿ անդամակցության և միջազգային առևտրի հետ կապված շարադրանքի հիմքում տ.գ.դ., պրոֆ. Թ.Թորոսյանի գիտական հայացքներն են:

**ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը ըստ երկրների խմբի
(հազար ԱՄՆ դոլար)**

	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.
Արտահանում								
Ընդհանուր ծավ.	297523.5	342816.6	505159.7	685599.2	722911.5	973920.5	985108.2	1157407
ԱՊՀ երկրներ	72771.2	89101.5	96331.8	129105.8	125090.7	187850.3	212487.3	354763.7
Ոչ ԱՊՀ երկրներ	224752.2	253715.1	408827.9	556493.4	597820.8	786070.2	772620.8	802643.2
Ներմուծում								
Ընդհանուր ծավ.	885128.4	874326.3	991051	1269445	1350697.6	1801735.9	2191613	3281837
ԱՊՀ երկրներ	168272.9	215119.6	305738.5	309713.6	386856	521772.5	696236.4	1087477
Ոչ ԱՊՀ երկրներ	716855.5	659206.6	685312.5	959731.6	963841.6	1279963.4	1495376	2194360

Օգտագործված են ՀՀ վիճակագրական ծառայության՝ 1999-2007թթ. հունվար-դեկտեմբերի տվյալները:

Ինչպես փաստում են աղյուսակի տվյալները, 2000-2007թթ. ընկած ժամանակահատվածում արտահանման ընդհանուր ծավալները աճել են 2.9 անգամ՝ կազմելով 859883.4 հազ. ԱՄՆ դոլար, ԱՊՀ երկրների հետ այն ավելացել է 3.9 անգամ՝ կազմելով 281992.5 հազ. ԱՄՆ դոլար, ոչ ԱՊՀ երկրների հետ 2.6 անգամ՝ կազմելով 577891. հազ. ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում տվյալ խումբ երկրներ արտահանվող ծավալների տեսակարար կշիռը արտահանման ընդհանուր ծավալում կազմում է, համապատասխանաբար ԱՊՀ երկրներ 33% և ոչ ԱՊՀ երկրներ՝ 67%:

2000-2007թթ. համար ներմուծման պատկերը հետևյալն է. ընդհանուր ներմուծման ծավալները աճել են 2.7 անգամ՝ կազմելով 2396708.4 հազ. ԱՄՆ դոլար, ԱՊՀ երկրների հետ այն աճել է 5.5 անգամ՝ կազմելով 919204 հազ. ԱՄՆ դոլար, ոչ ԱՊՀ երկրների հետ աճել է 2.1 անգամ՝ կազմելով 1477504.4 հազ. ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում տվյալ խումբ երկրների հետ ներմուծման ծավալների տեսակարար կշիռը ներմուծման ընդհանուր ծավալում կազմում է, համապատասխանաբար, ԱՊՀ երկրներում 38% և ոչ ԱՊՀ երկրներում 62%:

2005-2007թթ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ երկրներ արտահանման ծավալը աճել է 89%-ով, իսկ ներմուծման ծավալը աճել է 1.1 անգամ, ոչ ԱՊՀ երկրներ արտահանման ծավալը աճել է 2.1%-ով իսկ ներմուծման ծավալը աճել է 71.4%-ով:

Ուսումնասիրելով 2000-2007թթ. ՀՀ արտաքին առևտրի դինամիկան՝ կարելի է փաստել, որ ներմուծման ծավալների բավական մեծ աճ է գրանցվել 2002թ., իսկ 2002-2003թթ. ընկած ժամանակահատվածում գրանցվել են արտահանման ծավալների աճի մեծ տեմպեր: Տվյալները փաստում են նաև, որ 2000-2007թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրում արտահանման ծավալների աճի միջին տեմպը կազմել է 23.06%, ներմուծման ծավալների աճի միջին տեմպը՝ 20.23%, իսկ ՀՆԱ աճի միջին տեմպը՝ 12%: Ընդհանուր առմամբ 2000-2007թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին է ընկել ոչ ԱՊՀ երկրներին, որում գերակշռող դեր են խաղացել ներմուծման ծավալները:

Այսպիսով, ամփոփելով ուսումնասիրությունը, կարելի է փաստել, որ ՀՀ արտաքին առևտրում ավելի ու ավելի հասանելի և շահավետ են դառնում ինչպես հայրենական ապրանքները

արտասահմանյան շուկաների համար, այնպես էլ արտասահմանյան ապրանքները հայրենական շուկայի համար և անկախ այն բանից, թե որքանով են պայմանավորված տնտեսական աճի վրա ազդող բազմաթիվ գործոնների ազդեցությունները, մենք կարող ենք փաստել, որ արտաքին առևտրի նման առաջընթաց տեմպը խթանում է տնտեսական աճը:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է ընդգծել, որ չնայած ՀՀ աշխարհագրական դիրքին և որոշ հարևան երկրների կողմից առաջացրած խոչընդոտներին, մասնավորապես շրջափակումների և տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի ռազմավարական գործողությունների ազդեցության վեկտորի ուղղությամբ, այն գտնվում է գլոբալ տնտեսությանն ինտեգրվելու գործընթացում և, որ ամենակարևորն է, շուկայական սկզբունքներով առևտուր իրականացնող երկիր է:

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼԻՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ժամանակակից հասարակության արագընթաց փոփոխությունը, գիտատեխնիկական առաջընթացի դերի բարձրացումը, գլոբալացումը, ազգային տնտեսությունների միաձուլումը բերում են սոցիալ-տնտեսական նոր իրողությունների և մարդկային նոր քաղաքակրթության առաջացմանը: Սրա հետ մեկտեղ առաջանում են նոր մարտահրավերներ, վտանգներ, խնդիրներ, որոնց դեպքում անվտանգության հիմնախնդիրները դառնում են առաջնային: Հասարակության և բնության փոխհարաբերությունների ժամանակակից մակարդակը, աշխարհաքաղաքական առճակատումների սրումը, ժողովրդագրական և տնտեսական խնդիրների լարվածության մեծացումն սպառնում են մարդկային գոյությանը: Այս համատեքստում առավել մեծ նշանակություն են ձեռք բերում ազգային անվտանգության, մասնավորապես տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրները: Պետության անվտանգության և պաշտպանվածության ապահովումը մարդկության զարգացման բոլոր ժամանակներում կախված են եղել զարգացած և կայուն տնտեսություն ունենալուց:

Մարդկության գործունեության բոլոր ոլորտներում վտանգների առաջացման հավանականությունը հասարակությանն ստիպում է ավելի ակտիվացնել անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները: ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանի կարծիքով այսօր վտանգները դարձել են շատ ավելի սարսափելի: Դրա համար ՄԱԿ-ի կանոնադրությանը 21-րդ դարում ավելացել են ևս երկու դրույթներ՝

1. անվտանգության ապահովման ավանդական հայեցակարգի լրամշակում,
2. անհրաժեշտ է ոչ միայն կանխարգելել, այլ նաև ակտիվորեն կառավարել ռիսկերը և վտանգները¹:

Ազգային անվտանգության ապահովման՝ առավել ևս տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրներն այսօր շատ կարևոր են բոլոր երկրների համար: Տնտեսական շահերն այսօր դարձել են երկրների արտաքին քաղաքականության որոշիչ կողմը:

Տնտեսական անվտանգություն հասկացությունը, որպես իր կարևորագույն առարկայական և ածանցյալ չափանիշ, ենթադրում է համաշխարհային շուկայում ազգային տնտեսության

¹ К.Аннан, Доклад на саммите тысячелетия в ООН, Международная жизнь N 10, Москва 2000, ст.20.